

<Հայ Հեղափոխական Դաշնակցություն> կուսակցության

նախընտրական ծրագիր

Լեռնային Ղարաբաղի հանրապետության Ազգային ժողովի ընտրություններ

Հարգելի ընտրող

ՀՅԴ նախընտրական ծրագիրն անդրադառնում է քո կյանքում առկա հիմնախնդիրներին և տալիս է դրանց լուծման ուղիները: Մենք գտնում ենք, որ պետության գլխավոր խնդիրը երկրի և ժողովրդի անվտանգության ապահովումն է, հասարակության արժանապատիվ կյանքի համար պայմանների ստեղծումը: Ժողովրդավարական հասարակարգի կառուցումը և սոցիալական արդարության հաստատումը ԼՂՀ հզորացման, ճանաչման և խաղաղության պահպանման հիմնական պայմանն է: Մեր պետության հիմքումպետք է դրված լինի ժողովրդի իրավունքի գերիշխանությունը:

Դաշնակցություննիր կենսագործունեության ողջ ժամանակահատվածում բազմիցս ապացուցել է, որ ժողովրդի համար ամենադժվարին պահերին մշտապես կանգնած է նրա կողքին:

Դաշնակցությունը կամք ու կարողություն ունեցող այն քաղաքական ուժն է, որ պատրաստ է հետևողականորեն իրականացնել իր ծրագրերը և անշահախնդիր ծառայել ժողովրդին ու պետությանը:

Կրթություն և գիտություն

Դաշնակցությունը կրթության և գիտության դերը տեսնում է երկրի անվտանգությանը, տնտեսական և ռազմական հզորացմանը ծառայելու մեջ: Գիտության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակները պետք է լինեն գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը: Կրթության համակարգը պետք է կոչված լինի ձևավորելու մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, ինքնակազմակերպման ընդունակ, հայրենասիրության, մարդասիրության ու ազգային պետականության համար հպարտության ոգով դաստիարակված քաղաքացիներ:

Վերջին տարիներին համակարգի զարգացման դրական միտումներից կարելի է առանձնացնել դպրոցաշինությունը և նախադպրոցական համակարգի աշխուժացումը, ուսուցիչների աշխատավարձերի բարձրացումը, դպրոցականներին անվճար դասագրքերով ապահովումը:

Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է.

- ընդլայնել կրթական համակարգում հայրենասիրական և ազգային դաստիարակություն պարունակող ծրագրերն ու նախաձեռնությունները,

- ընդլայնել նախադպրոցական կրթության համակարգը՝ բացելով պետական մանկապարտեզներ: Խրախուսել այս ոլորտում մասնավոր ներդրումները՝ կառավարություն-համայնք-ներդրող երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների ձևաչափում և այն առավել գործնական դարձնել,

-համատեղել ուսուցման և դաստիարակության գործընթացներն ու վերականգնել արտադպրոցական դաստիարակության համակարգը,

- ընդլայնել արհեստակցական ուսումնարանների ցանցը և այն համապատասխանեցնել ԼՂՀ տնտեսական զարգացման հեռանկարին: Տվյալ կրթօջախներում ստեղծել նյութատեխնիկական ժամանակակից բազա:

-երկրի համաչափ զարգացման պահանջից ելնելով՝ շրջաններում բացել միջին մասնագիտական քոլեջներ և ընդլայնել ուսուցանվող մասնագիտությունների ցանկը,

- ուսուցիչների և կրթական հաստատությունների աշխատողների աշխատավարձը բարձրացնել ամեն տարի՝ նպատակ ունենալով կանխել սոցիալական խնդիրների առաջացումը,

-պետական քաղաքականությամբ վերաբնակեցվող գյուղերում և քաղաքներում երիտասարդ մանկավարժ մասնագետների համար կառուցել տներ,

-դպրոցներում ապահովել ղեկավարման կոլեգիալ համակարգ,

-մշակել համակարգ, որը կնպաստի ուսուցիչների և աշակերտների ամառային հանգիստը կազմակերպելու գործին: Երկրի մտավորականությունը պետք է կարողանա օգտվել բոլոր այն հնարավորություններից, որը հատուկ է սոցիալապես ապահով խավերին,

-ձևավորել հավասար հնարավորություններ և որակյալ գիտելիքներ ապահովող համակարգ,

-տաղանդավոր երիտասարդներին արտերկրներում ուսումը շարունակելու համար հատկացնել ֆինանսական միջոցներ,

- սոցիալապես խոցելի և անապահով խավերի համար մատչելի մասնագիտական կրթություն ապահովել՝ այդ գործում կիրառելով ուսուցման պետական ֆինանսավորման նոր մեխանիզմներ, մասնավորապես տրամադրելու սանողական վարկեր,

-հիմնականում խրախուսել ուսուցման վճարովի համակարգը միայն այն տեսանկյունից, երբ այն ֆինանսավորվում է ձեռնարկությունների կողմից՝ իրենց կադրային պահանջմունքները բավարարելու նպատակով,

- ընդլայնել բարձրագույն ուսումնական հաստատություններում պետպատվերի տեղերը: Այս ասպարեզում ունենք չիրացված հնարավորություններ: Պետպատվերի համար բյուջեից հատկացված միջոցների և վերջնական արդյունքում պատրաստված մասնագետների ներուժի լիարժեք իրացման գործընդհանուր համեմատական չէ և շատ դեպքերում անարդյունավետ է: Նպատակահարմար է ստեղծել կրթական հիմնադրամ, որտեղ կենտրոնացված ֆինանսական միջոցները միայն կօգտագործվեն մասնագետների վերջնական տեղաբաշխման և համապատասխան ժամանակահատվածում աշխատանքային գործունեության ծավալման արդյունքում:

-այլ երկրների բուհական ասպարեզի մասնագետներին հրավիրել ԼՂՀ, նրանց համար ստեղծել աշխատանքային և կենցաղային պատշաճ պայմաններ,

-խրախուսել վճարովի համակարգում օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը,

-մշակել համապատասխան ծրագիր՝ գիտական ներուժի պահպանման, երիտասարդացման, աշխուժացման համար: Պետք է բուհերը, մասնավորապես ԱրՊՀ-ն, դարձնել գիտական հիմնարար օջախ,

- մեծացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջեից ֆինանսավորման ծավալները՝ հենվելով իրական առաջարկների կամ պատվերների վրա,

-խթանել համագործակցությունը և ինտեգրումը ՀՀ միջազգային գիտական կենտրոնների հետ,

Կադրային ներուժը նպատակային օգտագործելու և հանրային կյանքում նրանց պահանջված լինելուանհրաժեշտությունը ընդգծելու համար սահմանել մասնագետների ու պետական պաշտոնյաների կրթական համապատասխան ցենզ, որը ներկայացված կլինի համապատասխան անձնագրային ձևավակերպումների տեսքով:

Կրթական և գիտական բարեփոխումների բոլոր միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ:

Պետաիրավական և պետական կառավարման համակարգ

Պետաիրավական և պետական կառավարման համակարգի ձևավորումը ԼՂՀ-ում ևս անցել է մի շարք հանգրվաններ: Այսօր կարող ենք ասել, որ այն հիմնականում կայացել է, բայց կատարելագործման խնդիրներ ունի:

Հաճախառանձին անհատների ցանկությունները, արտաքին քաղաքական կողմնորոշումները կամ նախապատվությունները շատ դեպքերում նույնացվել են պետականության էության և նպատակների հետ:

-Արցախի պետաիրավական և կառավարման համակարգը արտաքին համարկման /ինտեգրման/ առումով պետք է ընկալելի և ընդունելի լինի աշխարհի համար, իսկներքին առումով՝ սեփական ժողովրդի:

-ՀՅԴ-ն գտնում է, որ ներկա փուլում առաջնահերթ է պետաիրավական համակարգի կատարելագործման շարունակումը,որին կարող ենք հասնել միայն հասարակության համախմբամբև ներքաղաքական կայունությամբ:

Այդ ամենին կարող ենք հասնել միայն.

- առաջնորդվելով ԼԴՀ սահմանադրությամբ՝ օրեսդիր, գործադիր, դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքների լիարժեքկենսագործմամբ,

-բացառելովգործադիր գործառույթ իրականացնող մարմինների՝ օրենսդիր մարմնի վերահսկողությունից դուրս գործելու հնարավորությունը,

- ընդդիմությանը վերապահելովիրական ազդեցություն մի շարք մարմինների, հատկապես վերահսկողական լիազորություններ ունեցողկառույցների, կազմավորման գործում,

- քայլեր ձեռնարկելով անցնելու հարյուր տոկոսանոց համամասնական ընտրական համակարգին,

-խրախուսելով ժողովրդի լայն մասնակցությունը պետական կառավարման համակարգին՝ ապահովել և ընթացքավորել նրա քաղաքական բոլոր նախաձեռնությունները, ինչը պետության ներուժի բացահայտման վճռական պայմանն է,

- քաղաքացիների կողմից հանրահավաքների, հանրաքվեների և հանրային հարցումների նախաձեռնության իրավունքի իրականացման մեխանիզմների ճշտմամբ ևկատարելագործմամբ,

- կառավարման ընդհանուր համակարգին իրական ապակենտրոնացում հաղորդելով:Տեղական ինքնակառավարման ինստիտուտները, պետական կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս հանդիսանալով, կոչված են խորացնելու ժողովրդավարական սկզբունքները, նպաստելու երկրիզարգացմանը:

ՀՅԴ-ն գտնում է, որ անհրաժեշտ է պետական կառավարման մարմինների կազմի, կառուցվածքի հաստիքների լավարկում /օպտիմալացում/,տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պատասխանատվության ընդլայնում,ավագանու ինստիտուտի իրական կայացում,ինչպես նաև շրջանային վարչակազմի դեկավարի ուղղակի ընտրություն:

Սոցիալ-տնտեսական քաղաքականություն

ՀՅԴ Արցախի կառույցը գտնում է, որ հաջողություններ արձանագրելու համար երկրի սոցիալ-տնտեսական կյանքում պետք է կյանքի կոչել բազմակողմանիորեն ուսումնասիրված նոր ծրագիր՝ հիմնված հասարակության բոլոր խավերի ուշերտերի շահերի պաշտպանության վրա:

ՀՅԴ-ն, լինելով ընկերվարական կուսակցություն, գտնում է, որ.

- իր գլխավոր խնդիրն է երկրի տնտեսական զարգացման և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի արմատական բարելավման ապահովումը: ԼՂՀ հիմնահարցի և անվտանգության խնդիրների լուծումն ուղղակիորեն կախված է դիվերսիֆիկացված տնտեսության զարգացման վիճակից,

-երկրի հզորության կարևորագույն բաղադրիչներից մեկը սոցիալական պետության զաղափարն է, այսինքն՝ պետական քաղաքականության հիմնական առանցքը պետք է լինի մարդկանց բարեկեցության ապահովումը և եկամուտների խելամիտ ու արդարացի վերաբաշխումը,

-պետք է մշակել ռազմավարական առաջնահերթությունների վրա հիմնված ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգ, որտեղ հստակ արտահայտված կլինի պետություն-մասնավոր գործընկերային հարաբերությունը,

- սոցիալապես խոցելի և անպաշտպան շերտերը կենսական նվազագույն բոլոր կարիքները բավարարելու հնարավորություն պետք է ունենան, իսկ նրանց տրամադրվող պետական աջակցությունը պետք է լինի խիստ հասցեագրված ու նպատակային: ՀՅԴ-ն վերջնական նպատակ ունի երկրում բացառելու սոցիալապես անապահով խավերի գոյության փաստը: ՀՅԴ Արցախի կառույցը, ունենալով համապատասխան ներուժ, իրշուրջը համախմբելով ՀՀ-ում և արտերկրում ապրող հայությանը, ի գորու է լուծելու այդ խնդիրը,

- սոցիալական արդարության հիմքը խելամիտ օրենսդրության վրա հիմնված, հասարակությանը վստահություն ներշնչող անկախ դատաիրավական համակարգի առկայությունն է, առանց որի անհիմաստ է խոսել արդյունավետ ու մրցունակ տնտեսության գոյության մասին,

-երկրի ամբողջ տարածքում ոչ մի տնտեսվարող սուբյեկտ չպետք է դուրս մնա օրենքի ենթակայացումից,

- անհրաժեշտ է իշխանական բոլոր կառույցների ձևավորումը և գործունեությունը համապատասխանեցնել ժողովրդավարության սկզբունքներին՝ ենթարկելով օրենքի իշխանությանը: Միայն այդպես է հնարավոր արդյունավետ ու մրցունակ տնտեսություն ձևավորել և ապահովել ժողովրդի արժանապատիվ կենսամակարդակ,

- հարկման և բաշխման չափորոշիչները ևս պետք է հաստատվեն ժողովրդավարական սկզբունքներով: Նման հասարակության մեջ միայն կարող են

հավասարապես երաշխավորված լինել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կայունությունն ու սոցիալական արդարությունը,

- տնտեսության զարգացումը հնարավոր է ապահովել միայն ու միայն արտադրության կազմակերպումից մինչև ապրանքների իրացման մեխանիզմների ծրագրման և այդ ամենի իրագործման իրատեսական գործիքակազմի հստակեցման պայմաններում: Մենք գտնում ենք, որ կառավարությունը արտահայտված դերակատարություն պետք է ունենա Արցախում արտադրված ապրանքները արտաքին շուկաներում իրացնելու գործում,

- տնտեսությունը հստակ պետք է ունենա սոցիալական կողմնորոշում: Աշխատանքը պետք է լինի մարդկանց սոցիալական ապահովության և պաշտպանվածության գրավականը: Աշխատանքով ապահովված մարդը չպետք է ունենա սոցիալական լուրջ խնդիր, իսկ նրա կենսաթոշակային տարիները պետք է լինեն ապահով,

- աշխատատեղեր ստեղծող գործարանները պետք է լինեն կառավարության աջակցության ներքո,

- պետք է ընդլայնել պետության կարգավորող-վերահսկիչ դերը առանձնապես տնտեսության այն ոլորտներում, որոնք չեն կարող ինքնակազմակերպվելու ինքնակազմավորվել,

- ազատ հասարակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է խորացնել պետության միջամտությունը շուկայական տնտեսության մեջ: Ազատ շուկայի գործունեությունը միայն չի բացառում կառավարության միջամտությունը, այլև այն դարձնում է անհրաժեշտ,

- խիստ կարևոր է բազմակացությամբ սեփականության համակարգի հավասարակշռված ու համամասնական զարգացումը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ վերոհիշյալ ասպարեզում ՀՅԴ քաղաքականությունը հանգում է հետևյալին. արդար և ազատ պայմանների ապահովում, արտադրության արդյունքների առավելագույն արդարացի վերաբաշխում:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը անընդհատ կատարելագործման կարիք ունի: Այն պետք է լուծի սոցիալական հիմնախնդիրները՝ միաժամանակ խրախուսելով տնտեսության առաջնային ճյուղերի զարգացումը, նպաստի երկրում արտադրվող հարստության արդյունավետ օգտագործմանը և հայրենական արտադրության մրցունակության բարձրացմանը: Վերոհիշյալ քաղաքականությունը ինքնանպատակ չէ. այն տնտեսական զարգացման միջոց է: Հետևաբար, մենք ժխտում ենք դրամավարկային քաղաքականության պասիվ-

հարմարվողական բնույթը: Մենք մտադիր ենք այն վերածել տնտեսական քաղաքականության առանցքային և որոշիչ լծակի: Դրա համար անհրաժեշտ է.

-մշակել ռազմավարական առաջնահերթությունների վրա հիմնված ազգային տնտեսության անվտանգության հայեցակարգ, որովպետք է ձևավորվեն հարկային, բյուջետային և դրամավարկային քաղաքականության հիմնական չափանիշները,

-ապահովել Ազգային ժողովի առավել արդյունավետ մասնակցությունը բյուջեի կազմման ու կատարման վերահսկողությանը,

-պետական կառավարման ապակենտրոնացմանը զուգահեռ՝ ապահովել կենտրոնացված և համայնքային բյուջեի ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորումը՝ այն առումով, որ կարելի լինի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների համապատասխան ֆինանսական միջոցներ գոյացնել,

- տարեկան բյուջենկազմել ճյուղային և տարածքային կտրվածքով, և այն պետք է ապահովի բյուջետային քաղաքականության նպատակներ-միջոցներ-արդյունավետություն շղթայի քանակական և որակական միասնությունը,

-ապահովել բյուջետային միջոցների ծախսման խստիվ կանոնակարգման և այդ բնագավառում ֆինանսական կարգապահության բարձրացումը, մասնավորապես պետական միջոցների ծախսման նկատմամբ պատշաճ ֆինանսական վերահսկողության իրականացումը,

-էապես պարզեցնել հարկային համակարգը՝ խուսափելով անհարկի թղթաբանությունից ,

- ապահովել հավասար պայմաններ արդար մրցակցության համար՝ բացառելով հովանավորչությունը,

-հստակեցնել և պարզեցնել հարկային մարմինների գործողությունները բողոքարկելու մեխանիզմները,

-ապառք ունեցող ձեռնարկությունների համար ապահովել ներդրումներ անելու և ընթացիկ հարկերը վճարելու հնարավորություն,

- ապահովել փոքրումիջին գործարարության, գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառում ընթացիկ և կապիտալ վարկերի տրամադրման մատչելիություն: Տարածքների համաչափ զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ կառավարության համապատասխան ծրագրի շրջանակում՝ գյուղի և գյուղատնտեսության, ինչպես նաև ներդրումային հիմնադրամների կողմից անհրաժեշտ է կիրառել սուբսիդավորման տարբերակված քաղաքականություն:

Գյուղատնտեսություն

Երկրի պարենային անվտանգության ապահովման, գյուղական բնակչության եկամուտների ավելացման, գյուղիսոցիալական զարգացման հիմնախնդիրների

լուծման նպատակով անհրաժեշտ է բազմակողմանի պետական աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսությանը:

ՀՅԴ-ն գտնում է, որ.

-Արցախի հզորության հիմնական գրավականը իր գյուղերի զարգացման մեջ է,

-գյուղում ապրող հասարակության բոլոր խավերը պետք է գտնվեն պետության հովանու ներքո,

-Արցախի գյուղերը պետք է վերածվեն կայուն եկամտաստեղծ բնակավայրերի,

-խղճուկ վիճակում գտնվող բնամթերային տնտեսությունները /ներկայիս ընտանեական տնտեսությունները/ անհրաժեշտ է անհապաղ արժանաճան պետության աջակցությանը: Միայն այդ ճանապարհով է հնարավոր անցումը դեպի եկամտաստեղծ ֆերմերային տնտեսություններին,

-ֆերմերային տնտեսությունները՝ որպես հիմնական պարենային ապրանքների արտադրողներ, պետք է գտնվեն կառավարության աջակցության նեքո/մասնագիտական-խորհրդատվական, ֆինանսական/: Միայն նրանք կարող են ապահովել ավելացված արժեքի կայուն աճ՝ Արցախը դարձնելով գյուղմթերք արտահանող երկիր,

-կառավարության կողմից պետք է խրախուսվեն այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք իրենց շուրջը կհամախմբեն գյուղական մտավորականների և զինծառայողների ընտանիքներին,

Առկա գյուղատնտեսական արտադրական հնարավորությունները չեն համապատասխանում գյուղատնտեսության զարգացման ՀՅԴ տեսլականին:

Ուստի մենք առաջարկում ենք.

-հողի և գյուղտեխնիկայի սեփականատերերի միջև ստեղծել փոխշահավետ, ամուր իրավական հիմքերով երկարաժամկետ համագործակցություն, որը պիտի լինի գործադիր իշխանության ուշադրության կենտրոնում,

-սերմնաբուծարանները, տնկարանային տնտեսությունները, տոհմային անասնաբուծական կայանները գործեն որպես պետական բաժնետիրական ընկերություններ,

-անհրաժեշտ է արմատապես բարելավել ոռոգման համակարգերը,

-ընդլայնել գյուղատնտեսական համակարգի վարկավորման ծավալները: Ապահովել այգիների հիմնման և տեղական հումքով գյուղատնտեսական մթերքների մշակման արտադրությունների կազմակերպման երկարաժամկետ վարկավորումը,

-նախադրյալներ ստեղծել գյուղատնտեսության ապահովագրական համակարգի համար և փոխհատուցել բնական աղետներից տուժված գյուղացիական տնտեսություններին,

-կարևորել համայնքներում գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունների կամ նրանց մասնաձյուղերի հիմնադրումը և մասնագետների վերապատրաստումը,

-շարունակել և կատարելագործել համայնքի ղեկավարների և համայնքների կառավարման մեջ ներառված մասնագետների համար կազմակերպված դասընթացները:

ՀՅԴ արտերկրի կառուցները կարող են արտահայտված դերակատարություն ունենալ արտաքին շուկաների ձևավորման գործում: Այս ուղղությամբ գտնում ենք, որ բավարար ուսումնասիրություններ չեն կատարվել և մեծ բացեր ունենք արտադրական հնարավորությունները միջազգային շուկաներում ներկայացնելու գործում: Մենք դա դիտելու ենք որպես մեր արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական գործիքներից մեկը:

Արդյունաբերություն և ձեռնարկատիրություն

Արդյունաբերության բնագավառում քաղաքականությունը, որը մեծ հնարավորություններ է ընձեռնում լուծելու սոցիալ-տնտեսական արմատական խնդիրներ, բացելու հազարավոր աշխատատեղեր, հիմնականում պետք է հանգի հետևյալին.

-անկախ սեփականության ձևերից, տնտեսվարող սույբեկտներից՝ հավասար պայմաններ ապահովող մրցակցային միջավայրի ձևավորում, բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծում,

-արտաքին տնտեսական արդյունավետ քաղաքականության իրականացում և արտահանումը խթանող համակարգի ձևավորում, որը ցավոք, այժմ գտնվում է անմխիթար վիճակում,

- գիտական ու գիտատեխնիկական ներուժի ներդրում՝ արդյունաբերության ոլորտում: Այստեղ անհրաժեշտ է օգտագործել սիյուռքի մարդկային ներուժը,

-բարձրացնել պետության պատասխանատվությունը արդյունաբերության նորոլորտների վերականգնման կամ ստեղծման գործընթացում: Առնաձևակի ուշադրություն դարձնել շրջկենտրոններում և գյուղական համայնքներում կանանց աշխատատեղերի ստեղծմանը, համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը,

-տնտեսության կայուն զարգացումը, սոցիալական լարվածության մեղմացումը մեծապես պայմանավորված է փոքրումիջին ձեռնարկատիրության զարգացմամբ, որը կբերիմիջին խավի ձևավորմանը,

-պետության կողմից փոքրումիջին բիզնեսի զարգացման համար բարենպաստ վարչական, իրավական, հարկային, վարկային համակարգի ձևավորում, նրանց գործունեության պետական կարգավորման մեխանիզմների պարզեցում,

-մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն: Այն պետք է արտացոլի ստեղծագործողի, գիտնականի,ինժեների, գյուտարարի մասնավոր իրավունքը,

-իրավական մեխանիզմների հստակեցում, որոնքթույլ կտան բացառել իշխանության համակարգում գտնվող անձանց ձեռնարկատիրությամբ զբաղվելու դեպքերը, ինչպես նաև իշխանական լծակները բիզնեսի հովանավորչության նպատակին ծառայեցնելը,

-ֆինանսական և վարկային շուկաներում մենատիրացման երևույթների բացառում,

-արտերկրի ներդրողների համար գործընկերային միջավայրի ձևավորում, որը խրախուսելի կդարձնի ներդրումները ԼՂՀ-ում, մանավանդ եթե այն իրմեջ ներառում է նոր աշխատատեղերի ստեղծում:

ՀՅԴ-ն գտնում է, որ արդյունաբերության բոլոր ճյուղերի համաչափ զարգացմամբ և ծավալների ընդլայնմամբ է հնարավոր միայն ստեղծել ավելի մեծ համախառններքին արդյունք, որնիրիերթին կբարձրացնի բնակչության կենսամակարդակը:

Հակակոռուպցիոն և հակահովանավորչական քաղաքականություն

Կոռուպցիայի և հովանավորչության դեմ համապարփակ պայքարի կազմակերպումը ՀՅԴ-ի կողմից մշտապես դիտարկվել է որպես իրական ժողովրդավարության, երկրի կայուն զարգացման քաղաքացիական հասարակության կայացման, սոցիալական արդարության և համերաշխության, օրենքի գերակայության հաստատման հիմնական գրավականներից մեկը:

Կոռուպցիան, կաշառակերությունը, հովանավորչությունը խանգարում են բարիքների, հանրային հարստության արդարացի բաշխմանը: Աղքատության վերացման դեմ պայքարի հիմնական գործոնը կոռուպցիայի դեմ պայքարն է:Կոռուպցիան սպառնում է ոչ միայն տնտեսական բարեփոխումներին, երկրի ներդրումների իրականացմանը, այլև քաղաքացիական հասարակության կայացմանը: Այն սոցիալական, քաղաքական, տնտեսական, իրավական, բարոյական հիմնախնդիր է:

Կոռուպցիայի կանխարգելումը ենթադրում է համալիր միջոցառումների իրականացում հետևյալ ուղղություններով.

-կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի ընդունում՝ լուրջ գիտական, տնտեսական, հասարակական ու քաղաքական հիմնավորումներով,

-պետական գործառույթների իրականացման համար լիազորված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և արժանավայել կենսամակարդակի ապահովում,

-պետական ծառայողների ապարատում բարոյական և կարգապահական նորմերի ամրագրում,

-հասարակական վերահսկողության համար գործուն պայմանների և մեխանիզմների ապահովում,

-քաղաքացիների եկամուտների հայտարարագրման մեխանիզմների կատարելագործում,

-առանց վաղեմության ժամկետի կոռուպցիայի համար դատապարտված անձը ապագայում կառավարման ոլորտում որևէ մասնակցություն չպիտի ունենա:

-հետևողականորեն պետք է զարգացնել բիզնեսի և քաղաքականության տարանջատման իրավակարգավորումները՝ նախատեսելով օրենքներով ամրագրվող սահմանափակումների և պատասխանատվության հնարավորություններ:

Մշակույթ և երտասարդություն, զբոսաշրջություն և սպորտ

Արցախի Հանրապետությունը՝ որպես հայկական անկախ պետություն՝ ՀՀ-ի հետ համագործակցաբար պետք է շարունակի վերականգնել ազգային մշակույթը և լուրջ քայլեր ձեռնարկել հասարակության մեջ գոյություն ունեցող հորի և ապագային երևույթների վերացման ուղղությամբ:

ՀՅԴ-ն վերոհիշյալ ասպարեզում կարևորում է իր քաղաքականության հետևյալ սկզբունքները.

-խստագույն պայքար աղանդների դեմ, և այդ հարցում հիմնական միջոցը ընտրել հայ ժողովրդի հոգևոր վերածննդի գործընթացը,

-համայնքներում մշակութային կյանքի աշխուժացում՝ մշակույթի տուն-դպրոց համագործակցության խրախուսմամբ,

- ստեղծագործական խմբերի օժանդակում պետության կողմից,

-արտերկրում Արցախի մշակութային կյանքի ներկայացում,

-Սփյուռքի հետ կապի ամրապնդում, արտերկրում գործող ՀՅԴ կառույցների ողջներուժի օգտագործում, նոր հարաբերությունների հաստատում միջազգային տարբեր մշակութային և մարզական կազմակերպությունների հետ,

-նպաստել մանկական և երիտասարդական սպորտ-ֆիզիկուլտուրային ակումբների, կենտրոնների, ճամբարների ստեղծմանը,

-համայնքերի մշակութային տները վերածել նաև երիտասարդական կենտրոնների,

- երիտասարդ ընտանիքներին ցուցաբերել համակողմանի սոցիալական աջակցություն՝ նրանց բնակարանային խնդիրների լուծման համար՝ տրամադրելով անտոկոս հիպոթեքային վարկեր: Այդ ծրագիրը իրագործել նաև գյուղական համայնքներում,

-հասցեավորված քաղաքականություն իրականացնել երիտասարդների զբաղվածության ապահովման ուղղությամբ,

-աջակցել տաղանդավոր և շնորհալի երիտասարդների գիտական, ստեղծագործական ծրագրերի իրականացմանը,

-զբոսաշրջության բնագավառը պետք է դիտվի՝ որպես տնտեսության զարգացման կարևոր ճյուղ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ձևավորել և կատարելագործել զբոսաշրջության ոլորտի զարգացումն ապահովող բարենպաստ օրենսդրական դաշտ,

-պատմաճարտարապետական հուշարձանների վերանորոգման ծրագրերի ֆինանսական օգնության ցուցաբերում,

-ենթակառուցվածքների բնագավառում ներդրումներ անելիս հաշվի առնել զբոսաշրջության ռազմավարական դերը տնտեսության մեջ և տարածքների համաչափ զարգացման գործում,

-հնագիտական ուսումնասիրությունների ընդլայնում:

Հայրենադարձություն և Վերաբնակեցում

ՀՅԴ-ի համար հայրենադարձությունը միշտ եղել է ռազավարական կարևորագույն խնդիր, և մեր կուսակցությունը իր համապատասխան ներուժով միշտ էլ զորավիգ է կանգնել վերոհիշյալ քաղաքականությանը: Մենք ելնում ենք նրանից, որ վերաբնակեցումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման ամենակարճ ճանապարհն է հանդիսանում:

Ծրագրված նպատակային վերաբնակեցման քաղաքականությունը հնարավորություն կտա լուծել տնտեսական, քաղաքական բնույթի մի շարք հիմնախնդիրներ:

-այն ռազմավարական նշանակություն ունի ԼՂՀ բնակչության աճի խթանման համար,

-այն կնպաստի ԼՂՀ տնտեսական զարգացմանը: Այդ առումով կարևոր է վերաբնակեցվող շրջանների և ԼՂՀ մյուս շրջանների միջև բնական տնտեսական կապերի ստեղծումը:

Վերոհիշյալ ծրագրի իրագործումը ենթադրում է

-գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր արտադրամասերի ստեղծում,վերաբնակեցված շրջաններում գյուղատնտեսության և արտադրության զարգացման համար արտոնյալ վարկերի տրամադրում,

-բնակիչներին տրվող արտոնությունների տրամադրման գործիքակազմի կատարելագործում,

-հայրենադարձության համար բարենպաստ պայմանների ապահովում և ապագա տարիների համար վերաբնակեցման պետական լուրջ ծրագրերի կազմում,

-վերաբնակեցման գործընթացին տալ համահայկական բնույթ՝ հնարավորինս ընդգրկելով Սփյուռքիներուժը,

-վերաբնակեցման քաղաքականությանը զուգահեռ ամրագրել ներգաղթի և ներքին միգրացիայի քաղաքականությունը, այդ նպատակով առաջին հերթին ԱՊՀ-ում և ՌԴ-ում ապրող արցախցիների համախմբում և հայրենիք վերադարձի կազմակերպում,

-առաջնահերթության կարգով Արաքս գետի ափամերձ տարածքների յուրացում:

Արցախի տարածքների համաչափ զարգացման տեսլականից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ ծրագրերի շրջանակում ԼՂՀ-ում ստեղծել տնտեսության և հանրային կյանքի պահանջարկ ունեցող մասնագետների բանկ՝ դրա մեջ ներառելով ինչպես հանրապետության, ՀՀ-ի , այնպես էլ Սփյուռքիներ հայրենակիցներին:

Աշխատանք և զբաղվածություն

Տնտեսական և սեփականության ձևերի վերաձևավորումները առաջացրին էական փոփոխություններ աշխատանքային հարաբերությունների և բնակչության զբաղվածության բնագավառում:

Զբաղվածության ոլորտում պետության դերակատարությունը Դաշնակցությունը տեսնում է ոչ միայն ուղղակի կամ անուղղակի մեթոդներով, այլև ակտիվ միջամտությամբ.

Աշխատանքի բնագավառում մեր քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու արդյունավետ և զարգացած աշխատաշուկայի ձևավորմանը, առողջ, անվտանգ և ընդունելի պայմաններով աշխատանքի ապահովմանը:

Այս ոլորտում անհրաժեշտ է ստվերային հարաբերությունների դուրս մղումը, զբաղվածության ոլորտների ընդլայնումը, գործազրկության կրճատումը, աշխատողների աշխատանքային և սոցիալական հիմնական իրավունքների իրական պաշտպանության ուժեղացումը, արհմիությունների շարժման ամրապնդումը:

Աշխատանքի վարձատրության ամենամյա նվազագույն չափը պետք է սահմանվի կենսաապահովման նվազագույն զամբյուղի ոչ թե ձևական, այլ իրական արժեքի հաշվառմամբ:

Սոցիալական ոլորտ

Սոցիալապես անապահով շերտերի արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը պետության գերխնդիրներից է: Հայեցակարգային լուծմամբ պետք է երաշխավորել այն, որորևէ ձևով չի կարող արդեն իսկ ձեռք բերված սոցիալական առաջընթացը նվազեցնել, եթե այն պայմանավորված չէ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, ինչպիսիք ֆորսմաժորային դեպքերն են:

Սոցիալական բևեռացումը մեղմելու նպատակով անհրաժեշտ են.

-կարիքավորության աստիճանի ճիշտորոշելը և անցնելը հասցեագրված սոցիալական օգնության: Դաթույլ կտա ավելի շատ միջոցներ ծախսել՝ հօգուտ ամենաքիչ ապահովված ընտանիքների,

-նոր ձևավորվող ընտանիքներին լուրջ ֆինանսական աջակցություն ցուցաբերել,

- ծնելիության աճի և բնակչության բնական վերարտադրողականության խրախուսման համար պետության ծրագրերը անընդհատ կատարելագործել,

-պարբերաբար բարձրացնել երեխայի ծննդյան նպաստի չափը և ներդնել երեխաների ծննդյան հաջորդականության պայմանական խրախուսման ամբողջական համակարգը,

-գոհված ազատամարտիկների և հաշմանդամների ընտանիքներին համակողմանի հոգատարություն ցուցաբերել և արմատապես բարձրացնել նպաստները,

-արմատապես բարեփոխել ընտանեկան նպաստների համակարգը և պարբերաբար այն բարձրացնել,

-սպառողական զամբյուղի արժեքին մոտեցնելու քաղաքականությանը միտված ամեն տարի բարձրացնել կենսաթոշակները,

-պարտադիր կենսաթոշակի անցնել միայն կամավորության սկզբունքով,

-հինգ և ավելի երեխա ունեցող ընտանիքներին բնակարանով ապահովել,

-շարունակել և զարգացնել հիպոթեքային վարկավորման ուղղությամբ տարվող քաղաքականությունը՝ խրախուսելով գյուղական համայնքներում բնակարանային շինարարության գործընթացը:

Մարտական գործողությունների մասնակցած ԼՂՀ քաղաքացիները թոշակի իրավունք ձեռք բերելուց հետո կստանան զինված ուժերից զորացրված և նույն օրինակ կարգավիճակ ստացած զինծառայողներին հավասարեցված պարգևավճարը:

ԼՂՀ-ում ընդլայնել ՀՕՄ-ի գործունեությունը, նրա մեջ ներառելով նոր ծրագրեր, որոնք միտված կլինեն աղքատության կրճատմանն ու սոցիալական լարվածության մեղմանը:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում կարևորվում է կառավարման առավել արդյունավետ համակարգի ձևավորումը:

Ելնելով բուժօգնության վճարովի ծառայությունների աճից և բնակչության վճարունակության սուղ հնարավորություններից՝ հասարակության մի մեծ խումբ ստիպված է հրաժարվելու ժամանակին բուժվելուց և անհրաժեշտ դեղամիջոցներ ձեռք բերելուց:

Պետական բյուջեից առողջապահությանը հատկացվող առանց այն էլ սուղմիջոցների զգալի մասը նպատակաուղղված է ուռճացված համակարգի պահպանմանը: Արդյունքում տուժում են բուժօգնությանը ու բուժաշխատողները: Արմատական բարելավման կարիք է զգում նաև սննդամթերքների հետ կապված վերահսկողությունը և բուժօգնության ստանդարտների և որակների վերահսկումը:

Դաշնակցությունը գտնում է, որ այս բնագավառում անհրաժեշտ են.

- բոլոր խավերի համար բժշկական ծառայությունը դարձնել մատչելի,

- ձեռնարկել գործնական քայլեր՝ բնակչությանը անվճար մատուցվող բժշկական օգնության համակարգի արմատական բարելավման ուղղությամբ: Սոցիալապես խոցելի խավերի կենսաթոշակների և երեխաների համար որպես ապահովադիր պետք է մեծանա պետության դերը:

- առանձնակի ուշադրություն դարձնել շրջանային և համայնքային առողջապահության զարգացմանը, վերջիններիս մասնագիտական և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը,

-ապահովել հեռավոր և սահմանամերձ բնակավայրերը որակյալ բժշկական կադրերով,

-բուժաշխատողների աշխատավարձի ամենամյա բարձրացում: Առանց բուժաշխատողների սոցիալական հիմնահարցերի լուծման՝ հասարակության մեջ նրա հեղինակության բարձրացումն անհնար է,

-բժշկական հաստատություններում նոր տեխնոլոգիաների ներդրում, առանց որի անմտություն է պատկերացնել բժշկության զարգացումը, այն խթանելու համար բուժհաստատություն մուտքագրված գումարների այն մասը, որը ծախսվում է բժշկական նոր տեխնոլոգիաներ ձեռք բերելու համար, պետք է հնարավորություն ունենա բուժման վերջում ստանալ մանրամասն հաշիվ կատարված ծախսերի մասին, արդյունքում կվերահսկվի իրավիճակը, և այս մասով կհաստատվի կարգ ու կանոն,

-ապահովել առողջապահության ոլորտի ֆինանսավորման սահուն անցումը դեպի ապահովագրական եղանակը,

-կազմակերպել բժիշկ մասնագետների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման գործընթացը:

Բանակ

Երկրի անտանգությունը և պետության պաշպանվածությունն ու բանակի մարտունակությունը բարձրացնելու համար ՀՅԴ-ն առաջնահերթ է համարում.

- պատերազմի և խաղաղության պայմաններում բնակչության պաշտպանվածության համապատասխան համակարգի ապահովումը,

-հայրենիքին ծառայելու արժանավայել պայմանների ստեղծումը,

-զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը,

-արատավոր, ոչ կանոնագրային հարաբերությունների բացառումը,

-սպայական կազմի սոցիալական, այդ թվում բնակարանային հիմնախնդիրների լուծումը

-պարտադիր, ժամկետային և պրոֆեսիոնալ պայմանագրային ծառայության ճիշտ համադրումը,

- նախագորակոչային տարիքի երիտասարդների ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակությունը, ինչպես նաև նախնական զինվորական պատրաստությունը,

- բանակի ապաքաղաքականացման գործընթացի խորացումը,

Երիտասարդների ռազմահայրենասիրական և գաղափարական դաստիարակության հարցը մշտապես պետք է լինի պետության ուշադրության կենտրոնում:

Վճարովի համակարգում սովորած և մասնագիտություն ստացած անձինք, որոնք իրենց աշխատանքային գործունեությունը որպես զինծառայող կշարունակեն բանակում՝ հինգ տարվա ընթացքում պետության կողմից կմարվեն նրանց կատարած ծախսերը:

Բանակում չծառայած անձինք չեն կարող ստանձնել պետական բարձր պաշտոններ: Հայ երիտասարդը բանակ պետք է գնա՝ ամբողջապես գիտակցելով իր առաքելությունը, իսկ ծառայությունից հետո վերադառնա՝ որպես հասարակության լիարժեք, ակտիվ և առողջ անդամ:

Արտաքին քաղաքականություն: ԼՂՀ հիմնախնդիր

ԼՂՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակը Արցախի հիմնահարցի լուծումն է, որը մենք դիտում ենք որպես հայ դատի բաղկացուցիչ մաս և գտնում ենք, որ հարցը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով՝ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում:

Այդ նպատակով անհրաժեշտ է.

- մշակել և ընդունել արտաքին քաղաքականության հայեցակարգ,
- վարել կշռադատված արտաքին քաղաքականություն,
- համախմբել հայրենիքի և Սփյուռքիներուօը Արցախյան հարցի լուծման գործընթացում,
- բարեկամ երկրների հետ նպատակաուղղված աշխատանքներ ծավալել՝ ընդլայնելով այդ պետություններում ԼՂՀ դիվանագիտական մարմինների ներկայությունը:

Բանակցային գործընթացում ՀՅԴ-ն գտնում է, որ.

- պետք է վարել ակտիվ նախաձեռնողական արտաքին քաղաքականություն և

ԼՂՀ-ն հանդես գա որպես բանակցող կողմ,

-ՀՀ-ն նույն գործընթացում լինի ԼՂՀ-ի անկախության, անվտանգության երաշխավորը:

Արցախի տարածքային ամբողջականությունը տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունը երաշխավորող հիմնական գործոնն է, առ այդ՝ Արցախը պետք է հանդես գա որպես տարածաշրջանային կարևոր գործոններից մեկը և իրուրոյն դիրքորոշումներն արտահայտի զանազան իրադարձությունների ու զարգացումների ուղղությամբ:

-ԼՂՀ իշխանությունները պետք է ամուր կեցվածք ունենան տարածքային ամբողջականության պահպանման գործընթացում՝ դիտելով այն որպես խաղաղության պահպանման հիմնական երաշխիք,

-հակադարաբաղյան քարոզչության չեզոքացում և միջազգային հանրությանը ԼՂՀ-ում ընթացող ժողովրդավարական գործընթացների մասին տեղեկացում:

Արցախ-Հայաստան-Սփյուռք հարաբերություններ

ՀՀ-ն և ԼՂՀ-ն միասին պետք է հռչակվեն համայն հայության հայրենիք: ԼՂՀ-ն, ելնելով համայն հայության ամբողջականության գաղափարի գիտակցումից, ազգային շահերը ներկայացնողի իր յուրահատուկ գործնովպետք է գործուն և կարևոր դերակատարություն ունենա հայության համախմբման և սփյուռքի հայապահպանման գործում: Արցախը պետք է դառնա հայ ժողովրդի միասնության գաղափարական և առարկայական կիզակետը:

Արցախ-Հայաստան-Սփյուռք բազմակողմանի կապերի ամրապնդումը և զարգացումը պետք է հիմնված լինեն փոխշահավետ գործակցության վրա, որ ենթադրում է հետևյալ մոտեցումները.

-հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև համազգային փոխըմբռման, փոխվստահության, միասնության և համախմբվածության մթնոլորտի ապահովում,

-համահայկական քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական խորհրդաժողովների, համաժողովների, հավաքների, ինչպես նաև այլ բնույթի միջոցառումների կազմակերպումը ԼՂՀ-ում, ՀՀ-ում և Սփյուռքում: Նման միջոցառումներին Արցախի մասնակցության ապահովում,

-ԼՂՀ-ում, ՀՀ-ում և Սփյուռքի միջև երկարաժամկետ համագործակցության ծրագրերի մշակում և իրականացում,

-ԼՂՀ-ում, ՀՀ-ում և Սփյուռքում համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորում և բազմակողմանի համագործակցության ծավալում.

- **Սփյուռքիներուժի ամբողջական մասնակցության ապահովում ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման գործում:**